ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՅՈՒՐԻ ԽԱՉԱՏՈՒՐՈՎԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 300.1-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՎ ՆԱԽԿԻՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ 300-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Յուրի Խաչատուրովի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի և նախկին խմբագրությամբ 300-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը քննության ընդունելու վերաբերյալ հարցը, **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Յուրի Խաչատուրովի դիմումը (դիմողի ներկայացուցիչ՝ փաստաբան Մ. Պողոսյան) Սահմանադրական դատարանում մուտքագրվել է 2019 թվականի հունիսի 17-ին:

Դիմողը Սահմանադրական դատարանին խնդրում է որոշել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 300.1-րդ հոդվածի և 300-րդ հոդվածի (նախկին խմբագրությամբ) համապատասխանությունը Սահմանադրության 69, 72, 73 և 79-րդ հոդվածներին՝ հաշվի առնելով նաև վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունները:

Դիմողը, մասնավորապես, գտնում է, որ Օրենսգրքի նախկին խմբագրությամբ (2008 թվականի մարտի 1-ի դրությամբ գործած) 300-րդ հոդվածը չի համապատասխանում Սահմանադրությամբ ամրագրված որոշակիության սկզբունքին և արդյունքում խախտվում է դիմողի՝ Սահմանադրության 67-րդ հոդվածով ամրագրված իրավունքը:

Դիմողի կարծիքով՝ Օրենսգրքի գործող խմբագրությամբ 300.1-րդ հոդվածը նույնպես չի համապատասխանում սահմանադրորեն ամրագրված որոշակիության սկզբունքին, ինչպես նաև Սահմանադրության 72-րդ, 73-րդ հոդվածներին:

2. Ուսումնասիրելով դիմումը և կից փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն չի բավարարում «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերի պահանջներին: Այսպես, դիմումում վկայակոչված դատական ակտերից հետևում է, որ դիմողի նկատմամբ

2018 թվականի հուլիսի 28-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ որոշում, որը Վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի օգոստոսի 27-ի որոշմամբ թողնվել է օրինական ուժի մեջ, իսկ Վերաքննիչ քրեական դատարանի այդ որոշման դեմ դիմողի ներկայացրած վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի հունվարի 8-ի որոշմամբ չի ընդունվել վարույթ: Դիմողը, սակայն, չի նշել այն մասին, որ ներկայում իր նկատմամբ կիրառվել է գրավը՝ որպես կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոց, և այդ հիմքով իր նկատմամբ մեղադրանքի ենթադրյալ իրավաչափության հարցը կարող էր քննարկվել միայն այդ խափանման միջոցի համատեքստում, ընդ որում, ի տարբերություն կալանքի, գրավը չի ենթադրում անձնական ազատությունից զրկում, ուստի չի կարող դիտարկվել որպես անձնական ազատության հիմնական իրավունքին (Սահմանադրության 27-րդ հոդված) առավել ինտենսիվ միջամտության եղանակներից մեկը: Ուստի՝ գրավի կիրառման պայմաններում մեղադրանքի իրավաչափությանն աղերս-վող կապը դիմողի կողմից չի հիմնավորվել, բացի դրանից, դիմողը՝ ի հիմնավորումն Սահմանադրական դատարան դիմելու իր իրավունքի, վկայակոչել է իր նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ դատական ակտերը, որոնք այլևս առարկայազուրկ են, քանի որ դիմողին կալանավորելու մասին որոշում կայացնելու ժամանակ նրա նկատմամբ կիրառվել է գրավ, հետևապես՝ նա փաստացի անազատության մեջ երբևէ չի գտնվել:

3. Դիմողը խնդրել է Սահմանադրական դատարանին որոշել նաև 2008 թվականի մարտի 1-ի դրությամբ գործած՝ Օրենսգրքի նախկին խմբագրությամբ 300-րդ հոդվածի համապատասխանությունը Սահմանադրությանը, սակայն որևէ կերպ չի հիմնավորել քրեական դատավարության ներկա փուլում և իր կողմից վկայակոչված դատական ակտերի շրջանակներում իր նկատմամբ Օրենսգրքի այդ հոդվածի կիրառված լինելու հանգամանքը, ինչը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի ուժով գործի քննությունը մերժելու հիմք է:

Դիմողն ինքն է նշում, որ իր նկատմամբ կիրառվել է Օրենսգրքի 300.1-րդ հոդվածը և սահմանափակվել է Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված անձնական ազատության իր իրավունքը, և հետագայում դիմողը չի հիմնավորում, թե իր նկատմամբ քրեական դատավարության ներկա փուլում և իր նկատմամբ կալանքին այլընտրանք հան-դիսացող խափանման միջոցի կիրառմամբ ինչպե՞ս և որքանո՞վ է իրեն առաջադրված մեղադրանքը պարունակում Օրենսգրքի նախկին խմբագությամբ 300-րդ հոդվածի հատ-կանիշներ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերի՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

Յուրի Խաչատուրովի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի և նախկին խմբագրությամբ 300-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

21 հունիսի 2019 թվականի
ՍԴԱՈ-63